



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2015 թ.
№ 14 (984)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
երկշաբաթաբեր • հրատարակման 50 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«Մենք ունենք հմայիչ և ոգեղեն երիտասարդություն»



Գրիշա Կորկոտյան Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ

Նոյեմբերի 21-ին Մանկավարժական համալսարանի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ ՀՊՄՅ-ի մեծ դահլիճում անցկացվեց ամենամյա «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը: Ձեռնարկին ներկա էին ՀՀ-Աժ և բուհի խորհրդի նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ-ի հոգաբարձուների խորհրդի համակարգող, Աժ պատգամավոր Կարեն Ավագյանը, բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, պրո-ռեկտորները, պրեֆտորադասախոսական կազմը, ուսանողներ և հյուրեր:

Ուսանողներին շնորհավորեց ՀՀ ազգային ժողովի նախագահ, ՀՊՄՅ խորհրդի նախագահ Գալուստ Սահակյանը: Աժ նախագահն ընդգծեց, որ երկրի նախագահը մեծ ուշադրություն է դարձնում կրթության և գիտության ոլորտին, և ուսանող երիտասարդների ներկա մրցանակաբաշխությունն էլ դրա >3



Հմայակ Հարությունյան Պատմության և հրավագիտության ֆակուլտետ



Աստղիկ Հակոբյան-Սկզբնական կրթության ֆակուլտետ



Ալինա Պողոսյան Օտար լեզուների ֆակուլտետ



Սոնա Նավասարդյան Հատուկ կրթության ֆակուլտետ



Աննա Սարգսյան Բանասիրական ֆակուլտետ



Արփի Ամիրադյան Կուլտուրայի ֆակուլտետ



Էլյա Խաչատրյան Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ



Համլետ Գալստյան Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ



Անահիտ Արզումանյան Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

Պետության զարկերակը



ՀՀ Աժ նախագահ, ՀՊՄՅ խորհրդի նախագահ Գալուստ Սահակյանը նոյեմբերի 17-ին Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ պարգևատրել է Հայաստանի Հանրապետության մի շարք բուհերի ուսանողական խորհուրդների նախագահների և երիտասարդության հետ տարվող աշխատանքների ղեկավարների:

Նրանք պարգևատրվել են Ազգային ժողովի նախագահի հուշանշաններով և շնորհակալագրերով, ինչպես նաև Ազգային ժողովի պատվոգրերով:

ՀՀ Աժ նախագահի հուշանշանով պարգևատրվել է նաև ՀՊՄՅ-ի ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը:

«Պետության զարկերակը երիտասարդներն են, նրանք են երկրի շարժիչ ուժը: Ապագան ձերն է. դուք պիտի կարողանաք մորույնի դիտարկել ձեր դերը պետության կայացման գործում: Անցնելով փորձությունների ճանապարհով՝ հայ երիտասարդները հաջողությունների են հասնում կրթության, գիտության ոլորտներում միաժամանակ սրբորեն պաշտպանելով երկրի սահմանները՝ ծառայելով հայոց բանակուն»,- շնորհավորելով երիտասարդներին՝ նշել է ՀՀ Ազգային ժողովի նախագահը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Կրթության որակի գնահատման նոր մոտեցումներ

Նոյեմբերի 16-ից 17-ը Մանկավարժական համալսարանում Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ, ՀՀ գիտության պետական կոմիտեի, Առողջ դպրոցների ցանցի և Մոսկվայի հոգեբանասոցիալական համալսարանի հետ համատեղ անցկացվեց «Կրթության որակի չափման, գնահատման հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին կրթության փորձագետներ, պրոֆեսորներ, գործընկերներ մի շարք երկրներից, Հայաստանի և Արցախի համալսարաններից:

«Ներկայումս Մանկավարժական համալսարանում տեղի է ունենում կարևոր ու պատասխանատու գործընթաց»,- բացելով գիտաժողովը՝ ասաց ՀՊՄՅ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Ռեկտորը խոսեց ուսումնական գործընթացում դրսևորվող նոր մոտեցումների և ներդրվող նորագույն տեխնոլոգիաների մասին, որոնց >2



Կրթության որակի գնահատման նոր մոտեցումներ

➤ 1 նպատակը ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպումն է այնպես, որ ուսանողը հանդես բերի ինքնուրույն որակ և արդյունք, իսկ սովորեցնելու ընթացքում՝ մտածելու կարողություն: Անդրադառնալով կրթության որակի չափման և գնահատման խնդիրներին՝ ռեկտորն ընդգծեց՝ բոլորը պետք է մշակեն մի մոտեցում, որով հնարավոր կլինի գնահատել ուսանողի ինքնուրույն մտածելու գաղափարը. «Ուսուցման ընթացքում պետք է սովորեցնենք, արդյունքում՝ գնահատենք հենց այդ ընթացքը»,- նշեց ռեկտորը՝ հույս հայտնելով, որ կոմֆերանսի նյութերում տեղ գտած մոտեցումները կլինեն արդյունավետ և իրենց արտահայտությունը կզտնեն մասնակիցների պրակտիկ գործունեության մեջ:

Կրթության որակի չափման ու գնահատման հիմնախնդիրների վերաբերյալ իր դիտարկումներն ու մտահոգությունները հայտնեց նաև ՀՀ ԿԳ փոխնախարար

կեց երկօրյա գիտաժողովի քննարկումների ընթացքում խորհել մի շարք կարևոր հարցերի շուրջ. «Ե՞րբ ավարտվեց իմ մանկավարժական կրթությունը, ի՞նչ են ուսումնառությունն ու գնահատականը, ո՞րն է դրանց միջև գոյություն ունեցող կապը...», նոր միայն քննարկել կրթության որակի և գնահատման չափանիշները:

«Առանց հումանիտական մոտեցման ամեն ինչ զրոյանում է»,- այս համոզմունքով Բիլ Բոյլն առաջարկեց բաց լինել նոր տեսակետներ լսելու համար:

«Գիտակցո՞ւմ են արդյոք ուսուցիչները, որ կրթությունը հարմարեցումների գործընթաց է»՝ լսարանին դիմեց փորձագետը և շարունակեց, որ հենց այս հարցի պատասխանով էլ կարելի է ճշտել գնահատումն իրականացվե՞լ է, թե՞ ոչ:

Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների հայկական ասոցիացիայի նախագահ Լիլյա Բալասանյանը փո-



ռաջին պլան է մղվել կրթության որակը: «Երիտասարդները շատ հարցերում գերազանցում են մեզ, մեր առաքելությունն է բարձրացնել կրթության որակը, փոխանցել մեր փորձը, նաև տեսնել և ծանոթանալ նոր միտումներին»,- նշեց բանախոսը:

Առողջ դպրոցների եվրոպական ցանցի նախագահության անդամ Սերոբ Խաչատրյանը ներկայացնելով Մանկավարժական համալսարանը որպես կրթական բարեփոխումների կարևոր օղակ՝ առաջարկեց նման գիտաժողովների կազմակերպմամբ միավորել գործնական մանկավարժության, հետազոտողների և կրթության քաղաքականություն մշակողների ուղղորդված աշխատանքը:

ալ երկրների փորձերից: Գիտաժողովի մասնակիցները գիտաժողովի թեմայի շուրջ լսեցին նաև այլ գեկուցումներ: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Թոփաչյանը ներկայացրեց անձի դաստիարակվածության մակարդակի գնահատումը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Կարապետյանը՝ ուսուցիչների թեստաբանական կոմպետենցիաների ձևավորման նախադրյալները, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Քաջիկ Օհանյանը՝ արտերկրում բարձրագույն կրթության զարգացման ժամանակակից միտումները և այլն:



Մանուկ Սկրտչյանը՝ հավելելով, որ «Համակարգը գիտելիքակենտրոն է և տալիս է հանրակրթական որակի փաստաթուղթ, սակայն հանրակրթական որակը միայն գիտելիքը չէ: Գնահատումը պետք է ունենա իմաստ և նշանակություն»:

Փոխնախարարն անդրադարձավ նաև դպրոցների ավարտական և բուհերի ընդունելության քննությունների ժամանակ գնահատման համակարգերի տարբերություններին՝ իր խոսքն ամփոփելով այն համոզմունքով, որ անհրաժեշտ է զուգադրել ուսուցման կազմակերպման տեխնոլոգիաներն ու գնահատման համակարգը:

Կրթության միջազգային փորձագետ, պրոֆեսոր Բիլ Բոյլը ներկայացրեց Հայաստանի հետ ունեցած տարիների սերտ համագործակցությունը, ապա անդրադարձավ ուսուցիչների գնահատման մեխանիզմներին և մասնագիտական կրթության ոլորտում չափման և գնահատման հիմնախնդիրներին:

Փորձագետը ներկաներին առաջար-

խանցեց Մոսկվայի հոգեբանասոցիալական համալսարանի ռեկտոր Սվետլանա Բոնդորևայի ուղերձը և մաղթեց, որ Մանկավարժական համալսարանը շարունակի իր գործունեության կենտրոնում պահել դպրոցը՝ պատրաստելով փորձառու մասնագետներ, և բարձր մակարդակով կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումների կուրսեր: Ամփոփելով իր խոսքը՝ Լ. Բալասանյանը ուսուցիչների համար կարևորեց տարբեր երկրների լավագույն փորձը:

Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական կրթության ֆակուլտետի դեկան Ալեքսանդր Կասպիրովիչն իր հիացմունքը հայտնեց մեր բուհի հետ զարգացող համագործակցության և մեր երկրում «Շախմատը դպրոցում» բացառիկ ծրագրի ներդրման վերաբերյալ, ապա հիշեց հին ու բարի ժամանակների խորհրդային դպրոցը: Սակայն այսօր արդեն կրթական համակարգում փոփոխությունների հետ ձևավորվել է մրցակցություն և, ցավոք, ա-

նախադասարանը որպես կրթական բարեփոխումների կարևոր օղակ՝ առաջարկեց նման գիտաժողովների կազմակերպմամբ միավորել գործնական մանկավարժության, հետազոտողների և կրթության քաղաքականություն մշակողների ուղղորդված աշխատանքը:

ՀՊՄՀ-ի կրթության բարեփոխումների և որակի վարչության պետ Սկրտիչ Ավագյանն իր գեկուցման մեջ ներկայացրեց բուհի կրթության բարեփոխումների հեռավարների հիմնախնդիրները Բոլոնիայի գործընթացի համատեքստում: Բանախոսը վստահեցրեց, որ բարձրագույն կրթական համակարգի արմատական բարեփոխումներն ակնհայտորեն պահանջում են համալսարանական կրթական գործընթացի և գիտահետազոտական ոլորտի հիմնարար բարեփոխումների անցկացմանն ուղղված հետևողական քաղաքականության մշակում և իրականացում, որը նախատեսել և իրականացնում է բուհը՝ իր գործունեության համակարգը կազմող հանգուցային օղակներում կառուցվածքային և մեթոդաբանական վերափոխումներ իրականացնելով:

«Բոլոնիայի գործընթացի կուրորեն պատճենելը և մեխանիկական կրկնօրինակումները կնշանակեն դատապարտվել և մեկընդմիջտ հետ մնալ մրցակցության առաջնային գծից»,- նշեց Սկրտիչ Ավագյանն ու հավելեց՝ կրթական համակարգը մեծապես պայմանավորված է ընդհանուր միջավայրով. կարևոր է հաշվի առնել ոչ միայն ՀՊՄՀ ենթակառուցվածքի և հայկական կրթական միջավայրի ողջ բարդությունը, այլև դասեր քաղել

ալ երկրների փորձերից: Գիտաժողովի մասնակիցները գիտաժողովի թեմայի շուրջ լսեցին նաև այլ գեկուցումներ: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Թոփաչյանը ներկայացրեց անձի դաստիարակվածության մակարդակի գնահատումը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Կարապետյանը՝ ուսուցիչների թեստաբանական կոմպետենցիաների ձևավորման նախադրյալները, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Քաջիկ Օհանյանը՝ արտերկրում բարձրագույն կրթության զարգացման ժամանակակից միտումները և այլն:

Երկօրյա գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին 4 մասնաճյուղերում, ուր կլոր սեղան-քննարկումներից զատ անցկացվեցին վարպետության դասեր: Գիտաժողովի մասնակիցները ներկայացրին կրթության գնահատման, որակի հիմնախնդիրների լուծման ուղիների տեղական և միջազգային տարբերակներ:

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արթուր Թոփաչյանը, ում ակտիվ նախաձեռնությամբ անցկացվեց գիտաժողովը, գոհ է արդյունքներից. քննարկումներն ու վերլուծությունները առիթ հանդիսացան մտածելու մագիստրոսների համար կրթության որակի չափման և գնահատման հատուկ դասընթաց մշակելու անհրաժեշտության մասին, որում կներդրվեն մասնախմբերում առաջարկված լուծումների վերամշակումները: Միաժամանակ գիտաժողովը հարթակ էր, որտեղ մարդիկ հաղորդեցին իրենց տեսակետներն ու գաղափարները, կիսվեցին տեղական և միջազգային փորձով, բարձրացվեցին հարցեր, որոնք մասնագետներին խորհելու առիթ տվեցին: Պրոֆեսորը հույս հայտնեց, որ մասնակիցները կկարողանան ստացածը հաջողությամբ կիրառել ժամանակակից ուսումնական գործընթացներում:



«Մենք ունենք հմայիչ և ոգեղեն երիտասարդություն»



►1 դրսևորումներից մեկն է: «Մեր պետությունը բազմաթիվ ուղղություններով խրախուսում է երիտասարդների ակտիվ գործունեությունը, քանի որ կրթությունն ու բանակն են ապահովում, ամրապնդում մեր երկրի անվտանգությունը: Այս ձեռնարկն էլ սոսկ միջոցառում չէ, այլ առաքելություն, իսկ «Լավագույն ուսանող» ոչ թե կոչում է, այլ նպատակ»- նշեց Գալուստ Սահակյանը և բարձր գնահատեց Մանկավարժական համալսարանի առաջընթացը, ինչը մեծապես պայմանավորված է ուսանողներով: «Ես ամենահին էլ այն կարծիքն չեմ, թե գիտությունն ու կրթությունը չեն փոփոխվում. երիտասարդության գործու-

նեության մեջ և տեսլականում տեսանելի է դառնում յուրաքանչյուր առաջընթաց,-ասաց Գ. Սահակյանը: Մենք ունենք առողջ, հմայիչ, ոգեղեն երիտասարդություն, որն էլ կարողանում է ամրացնել մեր երկիրը: Ահա ինչու օրեցօր մեծանում է մեր համակրանքը երիտասարդության հանդեպ»:

Ուսանողներին շնորհավորեց նաև Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարեն Ավագյանը: «Աշխարհում թերևս չկա մի երկիր, ուր ավելի քան երկու շաբաթ տոնում են երիտասարդության տոները, -ասաց նա: - Այս ուսանողական կառույցն իր գործունեությամբ լավագույններից է, և պատա-

հական չէ, որ ուսանողական խորհրդի նախագահն օրեր առաջ արժանացավ ԱԺ նախագահի մեդալին»:

Բեմ են բարձրանում հա-

Գրիգոր Կորկոտյան (կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ), Համլետ Գալստյան (մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմա-



մալսարանի 10 ֆակուլտետների լավագույնները՝ Սոնա Նավասարդյան (հատուկ կրթության ֆակուլտետ), Ասողիկ Հակոբյան (սկզբնական կրթության ֆակուլտետ), Համլետ Հարությունյան (պատմության և իրավագիտության ֆակուլտետ), Արփի Ամիրադյան (կուլտուրայի ֆակուլտետ), Անահիտ Արզումանյան (գեղարվեստական կրթության ֆակուլտետ), Ալինա Պողոսյան (օտար լեզուների ֆակուլտետ), Աննա Սարգսյան (բանասիրական ֆակուլտետ), Էլյա Խաչատրյան (կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ),



տիկայի ֆակուլտետ): Այնուհետև 2014 թվականի ՀՊՄՀ «Լավագույն ուսանող» ճանաչված Աննա Մկրտչյանը «Լավագույն ուսանող» լամ-

ջագարդը փոխանցում է 2015-ի «Լավագույն ուսանող Գրիգոր Կորկոտյանին: Վերջինս խոստովանում է, որ չէր կարող չերազել մնան պատվի արժանանալու մասին և նշում է. «Լավագույն ուսանողը նա է, ով կարողանում է համընթաց շարժվել ժամանակի փոփոխություններին, ինքնաիրացվել: Բուհը այն կարևոր կառույցն է, որտեղ տարվող քաղաքականությունը մեզ հնարավորություն է տալիս դրսևորել մեր օճը և հասնել մեր ձգտումներին»:

Օրը իսկական տոնի վերածեցին հայ էստրադայի երգիչ-երգչուհիները՝ Ռուզան Ավե-



տիքյանը, Վարդան Գալստյանը, Սևակ Ամրոյանը, Սոնա Շահգեղյանը, Սոնա Ռուբենյանը, Ջարուհի Բաբայանը, «The Beautified Project» խումբը և ՀՊՄՀ ուսանող Վարդան Գալստյանը:

Լավագույններից լավագույնը ճանաչված Գրիգոր Կորկոտյանը, ով «Լավագույն ուսանող» կոչմանն արժանացավ գերազանց առաջադիմության և ակտիվ գործունեության համար, պարգևատրվեց Իսպանիայի ուղեգրով:

Սիլվա ԱՄՐՅԱՆ

ՆԱՏՕ-ի շաբաթն ամփոփվեց Մանկավարժականում

Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակում Հայաստանում անցկացվող ՆԱՏՕ-ի հերթական՝ 9-րդ շաբաթն ամփոփվեց Մանկավարժական համալսարանում ուսանողների և դասախոսների հետ հանդիպմամբ:

Ներկաներն անդրադարձան Հյուսիս-Ատլանտյան դաշինք կազմակերպության /ՆԱՏՕ/ գործունեությանը, նպատակներին, անդամ և գործընկեր երկրների հետ հարաբերություններին՝ շեշտը դնելով ՀՀ-ՆԱՏՕ փոխհարաբերությունների, ՆԱՏՕ-ի՝ մարդ-



կանց պաշտպանության, նոր սպառնալիքների դեմ պայքարի, գործընկերային հարաբերությունների հաստատման, խաղա-

ղության և կայունության կառուցման առաքելության ու գործունեության վրա: Հանդիպմանը ներկա էին ՀՀ

ԱԳՆ սպառնալիքներին վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետ Սամվել Մկրտչյանը, ՀՀ-ում Գերմանիայի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Նադյա Լիխտենբերգերը, ՆԱՏՕ-ի միջազգային հարաբերությունների բաժնի քաղաքական հարցերով և անվտանգության քաղաքականության բաժնի փորձագետ Սթեֆան Էլգերսմանը, ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մ. Միլը, Մեծ Բրիտանիայի դեսպան Ջուդիթ Ֆարնվորթը, ՀՀ-ում Ռուսիայի արտակարգ և լիազոր դեսպան Սորին Վասիլը և այլ հյուրեր:

«ՆԱՏՕ-ի հետ մեր հարաբերությունները գործընկերային են, որը շարունակվում է ավելի քան երկու տասնամյակ: Իրականացնելով երկուստեք ընդու-

նելի և համաձայնեցված քայլեր՝ այսօր հասել ենք լուրջ գործընկերային մակարդակի: Մտադիր ենք շարունակել մեր հարաբերությունները և ներառել նաև նոր ոլորտներ, մասնավորապես՝ կիրառական գործիքային ոլորտը»,- ասաց ՀՀ ԱԳՆ սպառնալիքներին վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետ Սամվել Մկրտչյանը: Վերջինս կարևորեց մնան հանդիպումները՝ ընդգծելով, որ այս ձեռնարկների միջոցով հանրությանը ներկայացվում է Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների բովանդակությունը, ընթացքն ու առաձեռնադրությունները:

ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ ►4

...Մանկավարժականում

➤4 Կորյուն Նահապետյանն իր ելույթում ընդգծեց ՆԱՏՕ-ի շաբաթվա անցկացման կարևորությունը Մանկավարժական համալսարանում, ապա խորհրդարանական ձևաչափում ներկայացրեց Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները, անդրադարձավ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի հետ բոլոր բնագավառներում արդյունավետ համագործակցությանն ու գործընկերությանը: Նա ընդգծեց

կուն աշխարհում՝ դրանց քանակը նվազեցնելու համար»: Խոսելով Սիրիայում և Ուկրաինայում տիրող ճգնաժամի և վերջիններին աջակցություն ցուցաբերելու մասին հարցին՝ հայաստանյան ներկայացուցիչներն ընդգծեցին, որ չնայած վեհաժողովում անդրադառնում են այս ճգնաժամներին և բազմաթիվ առաջարկներ անում, սակայն, ցավոք, այսօր միջազգային հանրությունն այդ ճգնաժամների



կառույցի կարևորությունն ինչպես արտաքին, այնպես էլ պաշտոնական քաղաքականության տեսանկյունից՝ վստահեցնելով, որ ամենատարբեր միստերում հայաստանյան ներկայացուցիչներին հաջողվում է պատշաճ ձևով ներկայացնել ազգային անվտանգության շահերը: ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մ. Միլլզը բարձր գնահատեց Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները՝ մասնավորապես ընդգծեց հայ խաղաղապահների փորձառությունը:

հանգուցալուծման վերջնական մոտեցումներում միասնական չէ: Բանակցային տարբեր գործընթացներ դեռևս ընթացքի մեջ են: Ներգրավված կողմերն ունեն տարբեր մոտեցումներ և չկա այնպիսի համաձայնություն, որը հնարավորություն կտա համախմբել միջազգային անվտանգության բոլոր ուժերին: Բանախոսները պատասխանեցին նաև այլ հարցերի՝ մասնավորապես, թե ՆԱՏՕ-ն ունի՞ կոնկրետ քաղաքականություն գեներալային հավասարության



վերաբերյալ, ի՞նչ վերաբերումը ունեն ԼՂՀ հակամարտության կարգավորման գործում, ինչպե՞ս են ստանում տեղեկատվություն անդամ երկրների վերաբերյալ և այլն: Հյուրերը եղան նաև բուհի թանգարանում, ծանոթացան բուհի պատմությանն ու ժամանակագրությանը:

Սոնա ԱՐԱՍՅԱՆ



Հայ կինոյի ոչ այնքան երկար պատմությունը հասցրել է մեզ թողնել անջնջելի անուններ: Այդ անունների սակավաթիվ շարքում իր ուրույն տեղն ունի **Յեն-րիկ Մալյանը**:

Այս տարի լրանում է անվանի կինոռեժիսորի 90-ամյակը, ցավոք, երկիրը չի ապրում մալյանական օրեր, բայց նրա արվեստի անդամական երկրպագուները հավատարիմ են հենց Մալյանի ֆիլմերում քարոզվող գաղափարներին:

Մալյանի արվեստը ճանաչող յուրաքանչյուրը անգամ մեկ

լույսյան քննությունների ժամանակ նրա կողմնորոշվելու, կռա-հելու ունակությունները, և հասկանալի է դառնում նրա տաղանդի աղբյուրը:

Մալյանը ընդունելության քննություններին դիմորդներին և մասնավորապես աղջիկներին չէր կարողանում «անբավարար» գնահատել. նա այդ պատասխանատու գործը հանձնարարում էր իր կոլեգաներին: Եղել են դեպքեր, երբ քննության ժամանակ դիմորդը հուզմունքից չի կարողացել խոսել, ու Մալյանը հուշել է իր հարևանությանը մատածներին, թե «այս աղջիկը ծնված է



«Ես չգիտեմ աջն ու ձախը, ես չգիտեմ երկու անգամ երկու, բայց ես գիտեմ մարդուն»

կարից կարող է հասկանալ, թե ով է ռեժիսորը, և դա խոսում է նրա անջնջելի ստեղծագործական ձեռագրի մասին, ձեռագիր, որը դաստիարակել, հուզել, կերպարների կենսակերպով ապրելու օրինակ է եղել հայ հանդիսատեսի համար:

Նրա ֆիլմերի ազդեցությունը կարելի է նույնիսկ հասկանալ առօրյայում հաճախ գործածվող թևավոր խոսքերից, որոնք, որպես սցենարական տեքստ, հնչել են Մալյանի ֆիլմերում:

Յենրիկ Մալյան արվեստագետի մասին շատերը գիտեն, բայց նրա մարդ տեսակը՝ իր նրբություններով, քջերին է հայտնի, նրբություններ, որոնք իսկապես ընդգծելի են դարձնում մտավորականի յուրօրինակ հատկանիշները: Հատկանիշներ, որ ոչ բոլորին է հասու: Մալյանի աներևակայելի ռեժիսորական տաղանդը նրան կողմնորոշում էր ամենուր: Բավական է հիշել միայն ընդունե-

դերասանուհի դառնալու համար, կամ այս տղան իսկական ռեժիսոր է»: Նա երբեք չէր սխալվում. դա գիտեին բոլորը: Նրան իրավիճակը գնահատելու և ճիշտ որոշումներ կայացնելու մեծ շնորհի էր տրված ի վերուստ:

Լինելով մեծություն այդ մեծ մտավորականը նաև չափից ավելի համեստ էր: Նա իր ծննդյան օրը և հաջորդ օրերին աշխատանքի չէր գալիս, չէր պատասխանում լցված հեռախոսագրերին: Իր համար կազմակերպված երեկոներին չէր գնում, իսկ եթե գնում էր՝ ուրեմն նրան նախօրոք չէին ասում:

Մի անգամ նրա ղեկավարած կուրսի ուսանողները որոշում են ծննդյան օրվա առթիվ անպայման շնորհավորել իրենց վարպետին, մտածելով, թե նրան ոչինչ չեն կարող մվիրել, որովհետև նա ոչ մի նվեր երբեք չի վերցրել: Ծնորհավորելու մեծ ցանկությամբ համակված՝ ուսա-

նողներն իրենց ձեռքով պատրաստում են տիկնիկ Մալյան, որը քայլում էր ու ափսեից դողունի մուրաբա վերցնում: Նվերը Մալյանին դուր է գալիս, ու դա եղել է եզակի դեպք. նախ՝ որ ուսանողներն իրենք են պատրաստել, և որ տիկնիկը հենց դրանի մուրաբա էր վերցնում: Որովհետև վարպետն ինքը սիրել է այդ մուրաբան:

Սա ամենասանձան կեցադալին օրինակն էր, որն իսկապես ապացուցում է Յենրիկ Մալյան մեծության անսահման համեստությունը, մեծություն, որ «չգիտեր աջն ու ձախը, չգիտեր երկու անգամ երկու, բայց գիտեր մարդուն»:

Մալյանի համար անգնահատելի էր մարդը, իսկ կոչումներն ու տաղանդն ավելի երկրորդական էին, և նա ապրում ու քարոզում էր մի պարզ, միևնույն ժամանակ բարդ գաղափար. «Լավ արվեստագետը առաջին հերթին պիտի լինի լավ մարդ»:

Հակոբ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ


ԸԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովի միստերի դահլիճում նոյեմբերի 6-ին տեղի է ունեցել Միավորված ազգերի կազմակերպության ազգային մոդել քառօրյա խորհրդաժողովի պաշտոնական բացումը, որին մասնակցել են քսանութ երկրի ութ բուհի և ութ դպրոցի պատվիրակներ, այդ թվում նաև Խ.Աբովյանի անվան ՀՀԱԿ-ի հեռակետային վարժարանի (ավագ դպրոց) բնագիտամաթեմատիկական հոսքի 11-րդ դասարանի աշակերտ Սարգիս Ղազարյանը, ով ընդգրկված էր Իտալիայի պատվիրակության կազմում:

«Խորհրդաժողովի նպատակը փախստականների բնակեցման, նրանց մահացության թվի կրճատման, կրթության և առողջապահական խնդիրներին և նմանատիպ այլ հարցերին լուծում տալն էր», -ասաց Սարգիսը:

Խորհրդաժողովը կազմակերպվել էր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ, Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համատեղ: Այն նվիրված էր Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման 70-ամյակին և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին:

Խորհրդաժողովի բացմանը ելույթ է ունեցել ՀՀ Ազգային ժողովի նախագահը, ով, շնորհավորել է մասնակիցներին Հայաստանում ՄԱԿ-ի առաջին ազգային մոդել խորհրդաժողովի բացման կապակցությամբ: Ազգային ժողովի նախագահը հույս է հայտնել, որ ՄԱԿ-ի երիտասարդ պատվիրակները որպես ապագա մասնագետներ, ընդլայնելով իրենց աշխարհայացքը, հաղորդակից լինելով աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին և ներկայացնելով սեփական տեսակետները, կարող են իրենց նպաստը



բերել երկրի կայուն զարգացման նպատակների իրականացմանը: Ոջույնի խոսքով հանդես է եկել նաև Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Բրեդլի Բուզեստոնը, ով փոխանցել է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունի ուղերձը:



Նրանք արժանի էին Նոբելյան մրցանակի

«Չարտասանված Նոբելյան ճառեր» ֆիլմ, որտեղ ներկայացվում է արևմտահայ չորս նահատակ մտավորականների՝ Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի և Ռուբեն Սևակի ենթադրյալ Նոբելյան ճառերը՝ վավերական հիմքերով:

Ճառն ավարտվում է 1915 թվականին տվյալ հեղինակի նահատակության հանգամանքների պարզ ու հակիրճ արձանագրումով:

Գեղարվեստական հյուսվածքն ամբողջովին կառուցված է գրողների ստեղծագործությունների հիման վրա, նրանք

տազայուն թարգմանվի, որն էլ կնպաստի դրա ավելի լայն տարածմանը: Կարծում են, որ այս ֆիլմը, ինչու ոչ, կարելի է ուղարկել Նոբելյան կոմիտե. թող որևէ մրցանակի չարժանանա, սակայն այս խոսքը համապարփակ ձևով կներկայացվի այդ հարթակում: Այս ֆիլմը դեռևս իր ճանապարհը կանցնի և կհանգեցնի այն հետևանքներին, որի մասին մեզ անհիշող յուրաքանչյուրն այսօր մտածում է», -ասաց ԶԶ մշակույթի նախարար Զասմիկ Պողոսյանը:



Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ լրագրող, սցենարիստ Լևոն Գալստյանի և ռեժիսոր Արթուր Բախտանյանի «Չարտասանված Նոբելյան ճառեր» ֆիլմի պրեմիերան, որին ներկա էր նաև մշակույթի նախարար Զասմիկ Պողոսյանը:

Արևմտահայ հեղինակների կենսագրական ու ստեղծագործական փաստերը, նրանց մտորումները, ապրած ժամանակը, իղծերն ու հիասթափությունները ֆիլմում համադրված էին համարժեք պատկերաշարով. վայրեր, որոնք ձեռք են բերում խորհրդանշական այլ իմաստ ու նշանակություն:

Գրողներից յուրաքանչյուրի Նոբելյան

խոսում են իրենց իսկ բառերով ու նախադասություններով, և այդ ենթադրյալ ճառերը միահյուսված է մի տեղ՝ դառնալով նրանց յուրատեսակ փիլիսոփայական մանիֆեստը, ինչը պահանջում է Նոբելյան մրցանակաբաշխության կանոնակարգը:

Յեղիմակները ֆիլմով լսարանի ուշադրություն են հրավիրում տվյալ գրողների ստեղծագործությանն ու առհասարակ այդ ժամանակաշրջանին, թե ինչ ուղերձներ էին հղում այս մեծագույն մարդիկ:

«Այս գրողներն իրոք արժանի էին, որ ժամանակին ստանային Նոբելյան մրցանակ: Շատ կարևոր է, որ այս նյութը հե-

«Մենք պարտավոր ենք տեր լինել մեր հոգևոր հարստությանը և դրանով զորանալ, մեր անցյալի ուժը մեզ վերադարձնել, որպեսզի ավելի կենսունակ լինի մեր մշակույթն ու մշակութային գիտակցությունը: Մենք հիշեցնում ենք մարդկանց իրենց իսկ ունեցվածքի մասին՝ համազգային այդ հզոր ժառանգության մասին, որ կոչվում է արևմտահայ գրականություն: Նրանց խոսքում արտացոլված է և՛ ժամանակի լույսն ու ստվերը, և՛ ցավը, և՛ երազանքները. սա արդեն իրենց ճառի գրական հավատամքի բովանդակային բաղադրիչներն են: Ֆիլմի նպատակը բոլորիս ևս մեկ անգամ հիշեցնելն է, թե ինչ ունենք և ինչ ենք կորցրել, ընդ որում ոչ թե մենք, այլ նաև աշխարհը», - ասաց սցենարի հեղինակ, ԶՊՄԶ հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը:

«Նրանցից յուրաքանչյուրը լիարժեք կարող էր կանգնել Ստոկհոլմի բեմում: Մենք ցույց ենք տալիս այն հետևողական ու մեծագույն ոճիչը, որը տեղի է ունեցել, և այն մեզ մի քանի տասնյակ տարիներով հեռացրել է համաշխարհային քաղաքակրթության մեջ երևալու իրավունքից», - ասաց ֆիլմի բեմադրող ռեժիսոր, ԶՊՄԶ դասխոս Արթուր Բախտանյանը:

Ֆիլմի նկարահանումների աշխարհագրությունը շատ լայն է եղել՝ հայտնի Սուրբ Փրկիչ հիվանդանոցից մինչև Իշ-



խանաց կղզիներ, Սև ծովի եզերքին կառչած Սարիգյուլ ձկնորսական ավան, Կեդրոնական վարժարան, Զայ Կաթողիկե պատրիարքարան, Ղալաթիայի ուլորագլոր փողոցներով դեպի հնագրավաճառի խանութ. ստամբուլյան մարդկանցով լեցուն փողոցներ, ներկայումս իրենց տեսքն ու ձևը փոխած, բայց մի բանում՝ 100 տարվա ընթացքում նույնը մնացած՝ անտարբեր և իրենցից բացի ուրիշ ոչ մեկին չճանաչող և չիմացող մարդիկ:

ԶՊՄԶ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը մշտն, որ ֆիլմն արյան հիշողության հրաշալի դրվագ էր, պատմության դաս, որ ժողովուրդն ապրում է գրական չորս հսկաների մոգական գործության և ազդեցության ներքո: «20-րդ դարի ընդամենը 20 տարվա գրականությունը, բարձրագույնն է հայ գրականության բազմադարյան ընթացքների մեջ: Պատմությունը մեր հիշողությունն է. հենց այդ շրջանից ենք փորձում քաղել գլխավոր դասը, սակայն պետք է նկատել, որ չորս հանճարները գրական նոր պատուհան ու երկխոսություն են, գրական հսկաներ, դեռ ավելին՝ գրական աստվածներ», - ասաց պրոֆեսորը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Աննախադեպ համերգ Մանկավարժականում



Մանկավարժական համալսարանում կրկին հյուրընկալվել էր Զայաստանի պետական կամերային նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Նվագախմբի այս համերգն աննախադեպ էր. առաջին անգամ Կամերային նվագախմբի հետ համատեղ համերգային ծրագրով հանդես եկան նաև Մանկա-

վարժական համալսարանի գեղարվեստական կրթության և կուլտուրայի ֆակուլտետների դասախոսները և ուսանողները:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր Զենրի Սիմոնյանը, միջազգային մրցույթների դափնեկիր, նույն ամբիոնի դոցենտ Շաքե Թադևոսյանը, հանրապետական մրցույթների դափնեկիր, դասախոս Արմինե Օջախյանը,

Նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյանը նկատեց, որ Մանկավարժական համալսարանում իրենք արդեն սիրելի և սպասված հյուր են: «Այդ սերը փոխադարձ է, մենք էլ ենք անհամբեր սպասում այս հանդիպումներին: Այսօր ինձ համար բացահայտում էր, ես չգիտեի, որ այս բուհում կան այսքան որակյալ և տաղանդավոր երաժիշտներ: Ես հպարտ և ուրախ եմ, դուք ևս հպարտանալու տեղ ունեք», - ասաց գլխավոր դիրիժորը:

ԶԶ մշակույթի վաստակավոր

Սոնա ԱՐԱՄՅԱՆ



երաժշտության բաժնի մագիստրատուրայի 2-րդ և կուլտուրայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողներ Ալբինա Տիգրանյանն ու Արսեն Զաքյանը նվագախմբի հետ կատարեցին Մոցարտի թիվ 21 «Դո Մաժոր», Գլազուոնովի սաքսոֆոնի համար գրված կոնցերտները, Առնո Բաբաջանյանի, Մակար Եկմալյանի, Էդվարդ Միրզոյանի, Արդիտի ստեղծագործությունները:



Համալսարանի անվտանգության ծառայությունը 5 տարեկան է

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում արդեն 5 տարի է, ինչ գործում է «Անվտանգության ծառայություն» ստորաբաժանումը: Կառույցը կայացել է, իսկ առաջընթացը նկատելի է. բուհի մուտքը ու ելքերի, մասնաշենքերի ներսում և մերձակա բակերում իրականացվող շուրջօրյա ծառայողական վերահսկողությունը զգաստացրել է անգամ նրանց, ովքեր սիրում են երբեմն-երբեմն հատել կարգազանցության սահմանը և հայտնվել անվտանգության աշխատակիցների տեսարկում: Ծառայության ղեկավար Սամվել Ափրոյանի հետ զրույցի ընթացքում փորձեցինք «գաղտնագրեծել», որոշ մանրամասներ ստորաբաժանման աշխատակիցների և նրանց աշխատանքային գործունեության, առկա խնդիրների ու մտահոգությունների մասին

- Ահա և լրացավ 3007-րդ Ձեր կառույցի գործունեության 5 տարին:

- 2010 թվականի նոյեմբերի 26-ին համալսարանի ռեկտորի հրամանով սկսվեց մեր կառույցի գործունեությունը: Աշխատանքներն սկսեցինք անվտանգության ծառայության 16 հոգուց բաղկացած աշխատակազմով՝ պետ, տեղակալ և 14 տեսուչ: Այսօր արդեն մեր շարքերը համալրվել են և համալսարանում անվտանգության պահուկումն իրականացվում է 41 հոգանոց խմբով:

- Որո՞նք են այն գործառույթները, որոնց համար պատասխանատվություն եք կրում:

- Տարիների հետ գործառույթներն էլ ավելացան. եթե առաջներում մենք ունեինք համալսարանի ներսում կարգուկանոնի պահպանման պատասխանատվություն, այսօր արդեն նաև իրականացնում ենք համալսարանական վեց մասնաշենքերի, ավագ-դպրոց վարժարանի և հմ. 57 հիմնական դպրոցի գույքի և տեխնիկայի շուրջօրյա պահպանություն: Մեր աշխատանքային գործունեության պարտադիր մասն են կազմում բակալավորիատի և հեռակա համակարգերի դիմորդների գործերի ընդունման, ընդունելության քննությունների ընթացքում կարգ ու

կանոնի, անվտանգության պահպանումը, համալսարանական բոլոր միջոցառումների մասնակցությունը, Աղավնաձորի ամառային դպրոցի, ուսանողական պրակտիկայի և ծննդային հանգստի ընթացքի անվտանգության պահպանումը:

- Ինչպե՞ս կայացավ կառույցը, կազմավորման շրջանում ի՞նչ բարդություններ կային...

- Սկզբում, իհարկե, դժվարություններ կային մինչև ուսանողները և դասախոսները հարմարվեցին մեր ներկայությանը, սովորեցին տեսնել մեզ առավտյան, ամբողջ օրվա ընթացքում, դասերից ու աշխատանքից տուն գնալիս: Մենք էլ սովորեցինք բուհին, սովորեցինք ճիշտ համագործակցել ֆակուլտետների ղեկավարների և ուսանողական խորհրդի հետ:



Համալսարանում ծխելն արգելված է, բայց կարգից չեղվողներ միշտ էլ լինում են... Մենք հասանք նրան, որ այսօր բուհի միջանցքներում ծխող ուսանողի կամ աշխատակցի չեք հանդիպի...

Հայտնաբերել ենք կորած իրեր, փաստաթղթեր, դրանք հասցրել տերերին, անգամ հետախուզվողի ենք հայտնաբերել:

Մեր տեսուչների աշխատանքը հատկապես դժվարանում է դասամիջոցների և ուսումնական գործընթացի հերթափոխների փոխվելու ժամանակ, երբ համալսարանական մուտքերի մոտ «ներս ու դուրսը» ակտիվանում է: Մենք փորձում ենք ամենայն աջակցություն ցուցաբերել: Անընդհատ տեսուչների տեղափոխություններ ենք անում, առավել բանիմացները հսկում են առավել «թեթ» մասերում, ուր ակտիվությունն առավել նկատելի է:

Չեմ կարող չասել, որ ռեկտորի անմիջական ղեկավարությամբ գործող մեր կառույցը

մշտապես գտնվում է ռեկտորի ուշադրության ներքո, և աջակցության ու օժանդակության պակաս չունենք:

- Իսկ ուսանողների պահվածքում, վարքի մեջ չա՞տ բան է փոխվել...

- Ցավոք, կան ուսանողներ, որոնք անպատշաճ վարք են դրսևորում, դրսից մարդիկ են հրավիրում, ծեծկռուտը սարքում... Երբեմն դրսից մեծ խմբով են գալիս՝ այսպես կոչված «ռազբորկաների»... Այդ ժամանակ մեր աշխատանքը մեծ զգուցություն ու ճիշտ մոտեցում է

որ աշխատանքի վերջվի համալսարանի անվտանգության ծառայությունում:

- Նա պարտադիր պետք է գրագետ լինի, բանական ծառայած լինի, ֆիզիկապես ամուր լինի, բարձր պատասխանատվություն, մարդկանց հետ շփվելու և հաղորդակցվելու կուլտուրա, բարետես արտաքին ունենա: Եթե մարդկանց աշխատանքի ընդունելու հարցում սխալվում ենք կամ վրիպում, մեր սխալը ուղղում ենք, աշխատանքային պարտականությունները



պահանջում. երբեմն պետք է լինում վարկյանները ընթացքում կողմնորոշվել:

- Նման դեպքերում ի՞նչ տույժեր են կիրառվում, ի՞նչ իրավասություններ են վերա-



լավ չկատարողները, թերացողները և աշխատանքից ուշացողները մեզ մոտ տեղ չունեն:

- Այնուամենայնիվ դժվարություններ լինում են...

- Այո, իհարկե, և մեր գործը ծագած կարգապահական խնդիրները կանխելն է: Դժվարություններ են լինում սեպտեմբերին, երբ առաջին կուրսեցիները մեր են ծանոթանում բուհի կարգուկանոնին, և նույնսերին, երբ սկսվում է հեռակա համակարգում սովորողների հոսքը:

- Իսկ տեսահսկող սարքերը... Դրանք պետք է որ նպաստեն Ձեր աշխատանքի արդյունավետությանը...

- Այո, մասնաշենքերի հարկերում և բակերում տեղադրված տեսահսկող տեխնիկան օգնում է մեր աշխատանքին, բարձրացնում բոլորի զգուցությունը: Հատկապես բարդ է աշխատանքը բարձրահարկի և ռեկտորատի մասնաշենքում: Եվ ես կուզեի, որ ուսանողներին կարգի հրավիրելու հարցում մենք մենակ չլինեցնեք, դա նաև իրենց խնդիրը համարեն ֆակուլտետների ղեկավարները, դասախոսները, ուսանողական խորհուրդները... Իհարկե, խոսքը ոչ բոլոր ղեկաների մասին է: Մենք համագործակցում ենք և ֆակուլտետների, և ուսանողական խորհրդի, և տարածքային ոստիկանության հետ:

- Համալսարանի անվտանգության աշխատակիցները մեր գործընկերներն են, նրանք ուշադիր են բոլորիս հանդեպ, զուսպ ու համեստ՝ մարդկային հարաբերություններում, կարծում են այսպես բուհի յուրաքանչյուր աշխատող: Իսկ ովքե՞ր են հատկապես աչքի ընկել ծառայողական պարտականություններն իրականացնելիս:

- Նրանք շատ են, բոլորին թվել չեն կարող, այնուամենայնիվ մի քանի անուններ կտամ՝ պետի տեղակալ Գեղամ Մխիթարյանը, տեսուչներ Արթուր Մկրտչյանը, Խաչիկ Դովհանյանը,

յանը, Արման Աղաջանյանը, Արթուր Հարությունյանը, Սարգիս Արամյանը, Դովհանես Եղյանը և էլի շատերը իրենց ծառայողական պարտականությունները բարձր պատասխանատվությամբ են կատարում, նաև օգնում են մոր ընդունված ծառայողներին:

- Դուք խի՞ստ ղեկավար եք...

- Մեր աշխատանքային կանոնակարգում գրված է, որ մեր անվտանգության ծառայության աշխատողները պետք է մարդկային հարաբերություններում լինեն համբերատար, բարյացակամ ու մարդկային: Շատ խիստ են վերաբերվում բոլոր նրանց, ովքեր չեն ըմբռնում ու խախտում են կանոնակարգի վերոնշյալ կետերը:

- Ի՞նչն էք ամենից շատ գնահատում մարդկանց մեջ:

- Մարդասիրությունն ու աշխատասիրությունը, ազնվությունն ու պատասխանատվությունը գործի հանդեպ:

- Կներկայացնե՞ք Ձեր ընտանիքը և անցյալի Ձեր գործունեությունը:

- Ամուսնացած եմ, կինս մանկավարժ է, այս բուհի շրջանավարտ: Ունեն տղա և աղջիկ, երկուսն էլ ստացել են բարձրագույն կրթություն և այժմ աշխատում են:

Ես 1979-ին ավարտել եմ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկայի ֆակուլտետը, 15 տարի աշխատել եմ ջրային տնտեսությունում՝ իմծնեից մինչև վարչության պետի տեղակալ, 3 տարի ռազմական ոստիկանությունում, ապա 37 ազգային անվտանգության ծառայությունում: 5 տարի առաջ փոխգնդապետի կոչումով անցել եմ զինվորական կենսաթոշակի: 2010-ից աշխատանքի եմ անցել Մանկավարժական համալսարանում:

- Դարձն Ափրոյան, Ձեր ստորաբաժանումը դժվար ու պատասխանատու գործունեություն է իրականացնում, աշխատանքի ընթացքում վրիպումն անխուսափելի՞ է...

- Եվ դժվար է, և պատասխանատու, եթե ես մի պահ զգուցությունս կորցնեմ՝ վրիպումն անխուսափելի կլինի... Ամեն առավտյան ժամը 7 անց 30-ին գիշերային հերթափոխից ես տեղեկանում եմ բոլոր մասնաշենքերի իրավիճակների մասին...

Այս տարիների ընթացքում վրիպումներ ու բացթողումներ, իհարկե, եղել են... Աշխատել ենք դրանք արագ վերացնել և հետագայում խուսափել նման թերություններից: Մեր լարված ու պատասխանատու գործում անհնար է մշտապես շրջանցել թերությունները, բայց աշխատում ենք, որ դրանք հնարավորինս քիչ լինեն:

Ինքնագովասանք չէ, բայց, կարծում եմ, մենք աշխատանքում առաջընթաց ունենք:

- Շնորհավորում են հորելյանի՝ 5 տարվա գործունեության և առաջընթացի առթիվ, մաղթում են հաջողություններ:

- Շնորհակալ եմ, պետք է կարողանալ աշխատանքը լավ կատարել և հաճույք ստանալ աշխատանքից...

